

«Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ» Թեմայով խորհրդարանական լսումներ

19-20 դեկտեմբերի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության անհասկանալի ուղղվածությունը, նրա անհետևողական և շփոթ ընթացքը մեծապես պայմանավորված են հայեցակարգային խոշորագույն մի սխալով. անկախություն ստանալուց ի վեր Հայաստանի ղեկավարությունն սկզբունքորեն անտեսում է Հայկական հարցի գոյությունը, չի գիտակցում այդ հարցի բուն էությունը, հավատում է այն շրջանցելու հնարավորությանը, մինչդեռ Հայկական հարցը չեն մոռանում Հայաստանի ռազմավարական ակտյանները՝ Թուրքիան և Ադրբեջանը:

Մանրամասները, նախ պատասխանելով հետևյալ հարցին:

Կա՞ արդյոք այսօրվա դրությամբ Հայկական հարց և ո՞րն է այն:

Հայկական հարցի էությունն անցյալում էլ, այժմ էլ նույնն է. հայ ժողովրդի իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում անկախ և ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների ստեղծում: **Հայկական հարցի լուծումը կարող է լինել միայն մեկը՝ հայոց լիարժեք պետականության վերականգնում պատմական Հայաստանի առնվազն այնպիսի ընդարձակ մի հողատարածքում, որտեղ հայոց քաղաքակրթության երկարատև անվտանգ գոյությունը երաշխավորված կլինի:**

Այլ կերպ ասած՝ Հայկական հարցը հայ ժողովրդի անվտանգության հարցն է, որը պահանջում է երկու նախադրյալի ապահովում. առաջին՝ հայկական լիարժեք և ամուր պետականության ստեղծում, երկրորդ՝ այդ պետականության անվտանգությունն ու կենսունակությունն ամրագրող հողային երաշխիքներ: Ընդ որում՝ մի նախադրյալի ապահովումն առանց մյուսի անիրագործելի է. ո՛չ հայկական պետությունն է ի վիճակի գոյատևել նախկին Հայկական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 29.800 կմ² խիստ խոցելի, իր անպաշտպանունակությամբ ինքնըստինքյան «ազրեսիա հրավիրող» սահմաններում, ո՛չ էլ հայկական պետության բացակայությամբ հնարավոր կլինի հայ ժողովրդի գոյությունն առհասարակ:

Այսպիսով, Հայկական հարցի լուծումն ամենևին էլ հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումը չէ, ինչպես թյուրիմացաբար կարծում են շատերը, և ինչպես տարածում են

հայերի կեղծ բարեկամները: Հայկական հարցը, ամենից առաջ, հողային հարց է:

Ինչպիսի՞ն է, սակայն, Հայկական հարցի վիճակը ներկայումս:

Հայ ազգի և հայկական քաղաքակրթության գոյությունը վտանգված էին նախկինում, վտանգված են և այսօր, որովհետև չլուծված է մնում տարածքային՝ հողային խնդիրը: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը դարձյալ հայտնվել է «լինե՞լ, թե՞ չլինել»-ի դրության մեջ: Խորհրդային կայսրության փլուզման գործընթացին զուգընթաց, հայության դեմ թուրքիայի և նրա կրտսեր դաշնակից Ադրբեջանի ծավալապաշտական բացահայտ նկրտումներն ու վայրագ գործողությունները ևս մեկ անգամ վտանգում են արդի Հայաստանի ֆիզիկական գոյությունը: Վերջին մեկուկես տասնամյակի անկախ գոյության փորձը փաստել է, որ Հայաստանը կարողացել է գոյատևել՝ 42.000 քառ. կիլոմետրանոց բնական որոշակի սահմաններ ունեցող տարածքի վրա վերահսկողություն հաստատելու շնորհիվ միայն, ներառելով Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը՝ ազատագրված տարածքներով հանդերձ: Սա է Հայաստանի անվտանգությունն ապահովող այն նվազագույն հողակտորը, որից պակաս տարածքում հայոց պետականության գոյությունն այլևս կարող է անհնարին լինել:

Սա է այն նվազագույն հողակտորը, որն ապահովում է Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ու միջազգային ուժերի քաղաքական, ռազմական, հոգեբանական ու աշխարհաքաղաքական շահերի բախումներում և փոխազդեցություններում: Միևնույն ժամանակ, ամենևին չի բացառվում, որ թուրքիայի և Ադրբեջանի անհաշտ քաղաքականությունը և վերջինիս կողմից պատերազմի հավանական սանձազերծումը Հայաստանին այլ ելք չթողնեն, քան էլ ավելի ընդլայնելու հայոց ռազմաքաղաքական իշխանությունը հայրենիքի բռնազավթված տարածքների վրա, ընդհուպ մինչև այն կետը, երբ թշնամին այլևս կդադարեցնի սպառնալն ու կհաշտվի հայերի՝ իրենց հայրենի հողի վրա պետություն ունենալու իրողության հետ:

Գալով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանը, պետք է նկատել, որ այդ քաղաքականության հիմնադրույթները ձևավորվել են դեռևս 1990-ական թթ. սկզբին և, հակառակ ընդունված տեսակետի, հետագայում լուրջ վերանայման ու փոփոխության, ըստ էության, չեն ենթարկվել: Այս իմ հայտարարությանն անմիջապես կառարկեն և՛ նախկին ՀՀ-ական, և՛ ներկա իշխանությունների ներկայացուցիչները, երկուսն էլ մեջբերելով, նախ և առաջ, այն հայտնի փաստը, որ 1998 թ.-ից ի վեր Հայաստանի արտաքին քաղաքականությունն իր օրակարգում է ներառել Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը (այդ ուղղությամբ տարված աշխատանքի արդյունավետությունն այլ

խնդիր է): Այնուհետև ներկա իշխանությունների ներկայացուցիչներն ուշադրություն կհրավիրեն նաև մեկ այլ փաստի վրա, որ իրենք, ի տարբերություն նախկինների, սկզբունքորեն դեմ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն Ադրբեջանի անգամ ձևական ենթակայության տակ դնելուն:

Ենթադրաբար լինելով հանդերձ, այս տարբերությունները ի վիճակի չեն փոխելու Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղվածությունն ու բովանդակությունը, որովհետև մանրուք են ի դեմս շատ ավելի ծանրակշիռ այն նմանությունների, որոնք Հայաստանի առաջին նախագահի որդեգրած ուղուց թափանցել են երկրորդ նախագահի վարած քաղաքականության մեջ:

Արդարև, ՀՀ արտաքին քաղաքականության հիմքերը դրվել են 1990-ական թթ. սկզբին խորապես սխալ, եթե չասենք երևութային հիմքերի վրա: Դա մի ժամանակշրջան էր, երբ Հայաստանի ղեկավարությունը, մի կողմից, տրվելով Արևմուտքից ներշնչված հեքիաթային երազանքներին, մյուս կողմից, միջազգային հարաբերությունների և ազգային անվտանգության հարցերում պատրաստվածության առեղծվածի պակաս ունենալով.

- աչք էր փակում տեսանելի հեռանկարում հայ-թուրք-ադրբեջանական ռազմավարական շահերի անհամատեղելիության վրա.

- պատմության դերակատարունը քաղաքականության մեջ համարում էր անախորհուն՝ անարժեք մի մնացուկ.

- արևմտյան զարգացած պետություններին միանորոք ընդունում էր որպես անաչառ միջնորդ և անվտանգության ամենակարող երաշխավոր.

- միջազգային քաղաքական համակարգի զարգացումն ընկալում էր դեպի «համընդհանուր բարօրություն և ազատություն» տանող միագիծ ու վերընթաց մի շարժում.

- իբրև արդյունք, Արցախի և ազատագրված տարածքի հիմնախնդիրը դիտում էր Հայկական հարցից կտրված ու մեկուսացված:

Այս թերությունները մինչև այսօր էլ, ցավոք, լիովին չեն հաղթահարվել:

Թվենք նախորդ վարչակարգից Հայաստանի Հանրապետության ներկայիս արտաքին քաղաքականության մեջ ժառանգաբար փոխանցված վճռորոշ ուղղությունները.

1. 1990-ական թթ. ի վեր ՀՀ արտաքին քաղաքականությունն անտեսում է Հայկական հարցի գոյությունն ու էությունը՝ նրա հողային բնույթը, համարելով, որ անկախ Հայաստանը կարող է գոյատևել նախկին ՀԽՍՀ 29800 քա կմ-անոց տարածքում կամ, առավելաբար, նախկին ԼՂԻՄ-ի տարածքի հետ միասին: Հայաստանի և առաջին, և երկրորդ նախագահներն ու նրանց

վարչակարգերը նախկին ԼԴԻՄ-ի սահմաններից դուրս ընկած Հայաստանի ազատագրված տարածքը, բացառությամբ Լաչինի միջանցքի, հրապարակավ հայտարարել են զիջման ենթակա:

2. Հայաստանի ցեղասպանված արևմտյան մասը լիակատար մոռացության է մատնվել՝ այն աստիճան, որ անկախ Հայաստանի դեսպանները կարող են մեր հայրենիքի այդ կորուսյալ տարածքն արդեն կոչել թուրքական տերմինաբանությամբ՝ Անատոլիա¹: Պետական մակարդակով կամ պետության պատվերով երբևէ քննարկումներ և իրավաքաղաքական և միջազգայնագիտական վերլուծություններ չեն իրականացվել հողային, նյութական, իրավաքաղաքական, մշակութային կամ ռազմավարական կշիռ ունեցող այլ կարգի փոխհատուցումների մասին: Արևմտյան Հայաստանի հարցը պետական մակարդակում վաղուց դարձել է արգելված թեմա, որը և իր արտացոլումն է գտել այս տարվա փետրվարին ընդունված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» ամուլ փաստաթղթի մեջ:

3. ՀՀ-ն այն ժամանակ էլ, այսօր էլ պատրաստակամություն է հայտնում առանց նախապայմանների Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել:

4. ՀՀ նախկին և նոր իշխանությունները հայ-թուրքական սահմանի բացման բուռն ցանկություն են դրսևորում առանց տնտեսական և ազգային անվտանգության բնագավառում պաշտպանական մեխանիզմներ մշակելու և ունենալու:

5. Սակայն կա մի բնագավառ, որտեղ ներկա իշխանությունները, որակապես զարգացրել են նախկինների ուղին. Հայաստանն, «առանց ավելորդ նախապաշարումների», համաձայնել է ՆԱՏՕ-ի շրջանակներում իրականացվող զանազան միջոցառումներում Թուրքիայի հետ ռազմաքաղաքական համագործակցության և թուրք զինվորականներն էլ Հայաստանի Հանրապետության հողում հպարտորեն բարձրացրել են իրենց դրոշը, իսկ հայ պաշտոնյաները հոտնկայս ունկնդրել են թուրքական հիմնը²: Սա համաշխարհային պրակտիկայում նմանատիպը չունեցող մի անհեթեթություն է: Համատեղ զինավարժությունները հնարավոր են միայն այն պետությունների միջև, որոնք ունեն դաշնակցային, բարիդրացիական կամ

¹ “...the campaign had one clear aim expressly stated by the government in secret directives: to rid Anatolia of its indigenous Armenian population and settle the so-called ‘Armenian question’ for good,” **Vahe Gabrielyan**, “Time to recognise the Armenian genocide,” *The New Statesman*, 12 October 2007.

² Խոսքը վերաբերում է 2003 թ. հունիսին ՆԱՏՕ-ի «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Հայաստանում անցկացված «Լավագույն համատեղ քանք - 2003» զորավարությունների ժամանակ տեղի ունեցածին: Այս «համագործակցության» քննադատությունը տե՛ս **Արմեն Այվազյան**, *Հիմնատարրերը Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի* (Երևան, «Լուսակն», 2004), էջ 98-99, 103-104:

առնվազն սուր հակասություններից զերծ, ընդհանուր ռազմավարական շահերի շուրջը ձևավորվող հարաբերություններ: Մինչդեռ հայ-թուրքական հարաբերությունները ո՛չ դաշնակցային են, ո՛չ բարիդրացիական, ո՛չ էլ զարգանում են ընդհանուր ռազմավարական շահերի շուրջը: Նմանատիպ «համագործակցությունները» (թեկուզ և բազմազգ ուժերի կազմում) հարված են հասցնում հայ ժողովրդի աշխարհաքաղաքական դիրքորոշումների ամբողջ համակարգին, ազգային ոգուն և արժանապատվությանը: Դրանք կարող են ընդամենը բթացնել հայ զինվորականի զգոնությունը և ապակողմնորոշել ոչ միայն հայ, այլև միջազգային հանրությունը, այդպիսով դուռ բացելով հայերի դեմ ծրագրված նոր գազանությունների առաջ (ինչպիսիք էին Գուրգեն Մարգարյանի և Յրանտ Դինքի սպանությունները): Այս կապակցությամբ ուզում են հիշեցնել պարոն վարչապետի մեկ ամիս առաջ ուսանողների հետ հանդիպումը, որտեղ նա դժգոհեց, որ ժողովրդի մեջ (մեջբերում են) «վտանգի զգացումը բթացել է»: Պետք է, սակայն, ընդգծենք, որ վտանգի զգացումը **բթացվել է** հենց Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անհրատես, վտանգը մոռացության մատնած քաղաքականության պատճառով³:

6. Ներկա և նախկին իշխանությունները բացարձակ անտարբերությամբ են վերաբերվել Հայաստանից ժողովրդի զանգվածային արտագաղթին, նրանք երբեք հայրենադարձությունը չեն դիտել իբրև Հայաստանի ամրապնդման ճանապարհ, այդ ուղղությամբ քարոզչական ու կազմակերպչական որևէ աշխատանք չի տարվել, ծրագրեր չեն մշակվել: Հայաստանը մինչև այսօր չի հռչակվել բոլոր հայերի հայրենիք, աշխարհասփյուռ հայերին երբեք տունդարձի կոչ չի ուղղվել (փորձ չի արվել նույնիսկ ուղղելու Իրաքից հազարներով արտագաղթող հայերի ճանապարհը դեպի հայրենիք): Սփյուռքի հետ կապերի համակարգումը հայտնվել է բարձիթողի վիճակում:

7. Ներկա և նախկին իշխանությունները շարունակաբար տոգորված են անհիմն լավատեսությամբ առ այն, որ հայ-թուրքական հարաբերությունները շատ շուտով, «ուր որ է» մտնելու են բնականոն զարգացման հուն⁴:

³ Ժամանակին ճիշտ այդպիսի վերնագրով մի հոդված էի հրապարակել. «Երբ բթանում է վտանգի զգացումը». - *Վասն Հայրության*, 16.12.2002, N. 44; ռուսերեն տարբերակը տես «*Í î õëàùá ÕÀËÏ*», *Áî èî ï Áðî áí èè*, 10.12.2002:

⁴ Սհա բոլորովին թարմ մի օրինակ. «We'll see what happens in the future.» Mr Sargsyan, describing himself as optimistic that Armenia and Turkey would make progress, asked: «After all, what do we gain, what do the Turks gain, from the present situation? Even in the time of the Cold War, when Armenia was part of the Soviet Union and Turkey was in NATO, we used to have a certain relationship with Turkey. «A railway line was built through Armenia to Turkey. A high-voltage electricity line was built between the two countries. Why should my wish for relations not be logical now?» (Tony Barber, «Armenia backs Turkey in EU», *The Financial Times*, December 11 2007). Պետք է նաև նկատել, որ Գյումրի-Կարս երկաթգիծը կառուցվել է ոչ թե խորհրդային, այլ ցարական ժամանակաշրջանում:

8. Հայաստանի դեմ միջազգային ասպարեզում տարվող թուրքական քարոզչության հանդեպ ընդունվել է կրավորական, ոչ արժանավայել կեցվածք: Որպեսզի այս հայտարարությունն սերկայարանոց չհնչի բերենք մի քանի թարմ օրինակ:

8.1. Շատ հաճախ Հայաստանի հասցեին թուրք ղեկավարության հնչեցրած մեղադրանքներն արժանի պատասխան չեն ստանում:

ա) Հայաստանի արևմտյան մասը բռնազավթած ցեղասպան թուրքիան գրեթե ամեն օր անվանարկում է Հայաստանն իբրև զավթիչ (օկուպանտ)⁵: Հայաստանի իշխանությունները երբեք չեն համարձակվում պատասխանել, որ իսկական զավթիչը թուրքիան է, որը բռնազավթել է Հայաստանի բնիկ տարածքի 9/10-րդ մասը:

բ) Մինչ թուրքիան մշտապես սպառնում է Հայաստանին, Հայաստանը հայտարարում է, որ ինքը կողմ է թուրքիայի եվրոմիությանն անդամակցելուն:

գ) Ամենաթարմ օրինակներ. թուրքիայի վարչապետ Էրդողանը Բաքվում կայացած թյուրքախոս պետությունների հավաքին հայտարարեց (մեջբերում են). «Պատմական գործընթացները ժամանակին կիսել են Ադրբեջանն ու թուրքիան, եւ մեր միջեւ [ընդհանուր] սահման է եղել: Իսկ այսօր մեր առջեւ հսկայական հնարավորություններ են բացվել եւ մենք պետք է դրանք օգտագործենք: Վերջին 15 տարիները ցույց են տվել, որ ոչինչ չի կարող մեզ կանգնեցնել: Մեր ապագայի ճարտարապետները հենց մենք ենք»⁶: Այս հայտարարության առաջին մասը թուրքական հերթական վտանգավոր կեղծիք է, որը աջակցություն է հայտնում Ադրբեջանի ժավալապաշտական նկրտումներին ամբողջ այսօրվա Հայաստանը, ներառյալ Երևան մայրաքաղաքը, հայտարարելու Արևմտյան Ադրբեջան ու «պատմականորեն ադրբեջանական տարածք»: Իսկ այս հայտարարության երկրորդ մասով Էրդողանն արդեն ակնարկում է Հայաստանի ոչնչացման թուրք-ադրբեջանական ծրագրի գոյությունը: Սակայն պաշտոնական Երևանը, ինչպես միշտ, նախընտրեց ոչինչ չլսել ու որևէ արձագանք չտալ: Ավելին ՀՀ վարչապետը մեկ ամիս չանցած *The Financial Times* թերթին տված հարցազրույցում հայտարարեց՝ «Ես չեմ

⁵ Ահա թուրքիայի վարչապետի շուրթերով հնչած այդպիսի հերթական մի մեղադրանք. «...աշխարհը լռում է: ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը հանձն են առել խնդրի կարգավորումը, սակայն օկուպանտի հասցեին ոչ մի քննադատություն չի հնչում: Մենք միայն խորհուրդներ ենք լսում: Թուրքիան Լեռնային Ղարաբաղի հարցում միշտ եղել է եւ լինելու է Ադրբեջանի կողքին».

⁶ «Էրդողան. Թուրքիան Ղարաբաղի հարցում միշտ լինելու է Ադրբեջանի կողքին», *PanARMENIAN.Net*, 17.11.2007 14:54 GMT+04:00:

կարծում, որ նա [Էրդողանը] նվիրված չէ Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելուն»⁷:

դ) Թուրքիայի վարչապետ Էրդողանը հոկտեմբերի 19-ին մի անգամ հրապարակեց արևմտյան ամենահեղինակավոր օրաթերթերից մեկում *Wall Street Journal*-ում (**Recep Tayyip Erdogan**, "Congress and Armenia," *WSJ*, October 19, 2007), որն այդպես էլ անպատասխան մնաց, այնինչ Հայաստանին հրաշալի հնարավորություն էր ընձեռվել ներկայացնելու և պաշտպանելու իր տեսակետները միջազգային հանրության առջև: Պատասխանի բացակայությունն ինքնին վկայում է Հայաստանի արտաքին քաղաքականության անմշակ և թույլ լինելու, այդ բնագավառում աշխատանքի ցածր որակի և կրավորականության մասին:

ե) Թուրքիան իր կազմակերպած քարոզարշավներում մշտապես կապում է ցեղասպանության ճանաչման խնդիրը տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակին, մեկնաբանելով այն իր շահերի տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունը երբեք չի փորձում հիշեցնել աշխարհին, որ ցեղասպանության հետևանքները սարսափելի ներազդեցություն են գործել տարածաշրջանի անվտանգության վրա, որ ցեղասպանական քաղաքականության նորոյա դրսևորումները շարունակվում են Ադրբեջանի քաղաքականության մեջ և խրախուսվում Թուրքիայի կողմից:

8.2. Հայաստանի ղեկավարությունը, չգիտես՝ ինչու⁸, միջազգային ասպարեզում ելույթ ունենալիս, անընդհատ շեշտում է իր՝ Թուրքիայի համեմատ փոքր երկիր լինելը, փոխանակ շեշտելու Հայաստանի և Թուրքիայի պետությունների՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտների, իրավահավասարությունը⁸:

8.3. Ներքին ասպարեզում իրավիճակը շատ ավելի անմխիթար է. թրքասիրության բուռն դրսևորումները հանդիպում են անեն օր: Բավական է հիշել հենց այս օրերին Հայաստանի պետական (!) դպրոցներից մեկում «Հայաստանում Ադրբեջանի օրեր» խայտառակ ծրագիրը, որին աջակցություն է հայտնում Հայաստանի արտգործնախարար Վ. Օսկանյանը⁹ և որը, բնականաբար, չէր կարող տեղի ունենալ առանց հանրապետության գերագույն ղեկավարության աջակցության: Սա նույնն է, եթե Սիրիայիում անցկացվեին Իսրայելի օրեր կամ Իսրայելում Սիրիայի: Միևնույն ժամանակ Բաքվից հնչում են ամենօրյա սպառնալիքներ: Հիշեցնեն,

⁷ "I don't think it's correct to say he's not committed to establishing relations with Armenia (**Tony Barber**, "Armenia backs Turkey in EU," *The Financial Times*, December 11 2007).

⁸ Սիսայիսի անտեղի մի հիշեցում Ս. Սարգսյանի դեռևս պաշտպանության նախարար եղած ժամանակվա մի հոդվածում - "If Turkey lifts the blockade of its border with Armenia, my small country becomes geopolitically closer to Europe." - **Serge Sarkisian**, "In Spite Of The Genocide..." *Wall Street Journal*, 22 Dec 2006.

⁹ "Дни Азербайджана в Ереване - яркий пример приверженности Армении диалогу и миру", www.regnum.ru/news/933400.html, 17:17 17.12.2007

որ այդ պետական խոշորագույն դպրոցի տնօրենն է հրապարակայնորեն Հայկական բանակի դեմ քարոզող և Արցախը Հայաստան հայրենիքի մաս չհամարող պրն. Ա. Բլեյանը: Այսպիսի արտառոց իրավիճակում Հայ Դատն իր քաղաքականությունը հռչակած Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, նրա խորհրդարանական ֆրակցիան, ինչպես նաև այդ կուսակցության ներկայացուցիչ կրթության նախարար պրն. Լ. Մկրտչյանը որևէ խնդիր չեն տեսնում: Խնդիր չի տեսնում նաև Հանրապետական կուսակցությունը, որի նախագահ պրն. Ս. Սարգսյանն էլ ամենամյա սեպտեմբերյան այցը կատարեց հենց պրն. Բլեյանի ղեկավարած դպրոցը: Չնոռանանք, որ Հանրապետական կուսակցությունն ինքն իրեն հայտարարել է նժողովայն գաղափարախոսության կրող (հիարկե, Գարեգին Նժդեհը և ոչ մի տող չի գրել Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և Հայաստանը միայն 30000 քր կմ-ի մեջ արգելափակելու մասին):

Հիշենք նաև, որ հանգիստը թուրքական Անթալիայում Հանրային (պետական) և մասնավոր հեռուստատեսություններով զովագրվում է ամբողջ տարին շարունակ: Երեկ այս ամբիոնից բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ հայտարարում էին թուրք հասարակության հետ աշխատելու անհրաժեշտության մասին, ինչը, կարծում եմ, գիտական ֆանտաստիկայի ոլորտից է: Նախքան այդ, պարոնայք, բարի եղեք և կարողացեք աշխատել *հայ հասարակության* հետ, այլ ոչ թե թույլ տալ, որ հայ երեխաների ուղեղները լվացեն Ադրբեջանից ժամանած նախկին բանակայինները և տնաբույս թուրքասերները:

Այս առումով նկատենք նաև, որ Հայաստանի արտաքին քաղաքականության ընդհանուր լրդվածության պայմաններում տեղի է ունենում կարևոր հասկացությունների վտանգավոր նենգափոխում. թշնամի պետություն Թուրքիան անընդհատ հիշատակվում է իբրև «հարևան երկիր», կարծես չկան ոչ թուրքական շրջափակումը, ոչ էլ թշնամական քաղաքականության մյուս դրսևորումները: Երեկ պրն. Ա. Ռուստամյանը ափսոսանքով խոսում էր «թուրք գործընկերների» Հայաստան չժամանելու մասին: Այդ երբևանի՞ց Թալեաթին ու Էնվերին պաշտող թուրք պատգամավորները դարձան «գործընկեր»: Չնոռանանք, որ ժամանակին Գրիգոր Չոհրապն էլ էր Թալեաթին գործընկեր համարում և նույնիսկ վտանգի պահին պատսպարում էր նրան իր տանը: Մի քանի տարի անց նույն Թալեաթի հրամանով հայ ժողովուրդը բնաջնջվեց իր բնիկ հայրենիքում, իսկ Գրիգոր Չոհրապի գլուխը թուրքերը քարով ջախջախեցին:

8.4. Վերջապես, ոչ արժանապատիվ կեցվածքի փայլուն մի օրինակ է նաև այս քննարկումներին թուրք պատգամավորներ հրավիրելը: Երբևիցե Ձեզ, տիկնայք և պարոնայք հայ պատգամավորներ, հրավիրե՞լ են Թուրքիայի խորհրդարան՝ որևէ

նմանատիպ լսումների մասնակցելու: Արդյոք ի՞նչ իմաստ ունի հրավիրել թուրք պատգամավորներին Հայաստանի խորհրդարան, այն էլ հայ-թուրքական հարաբերություններին նվիրված լսումների, եթե նրանք չեն ճանաչում հայ ժողովրդի դեմ գործադրված մեծագույն ոճիրը՝ ցեղասպանությունը, այսինքն պատրաստ են կրկնելու նույնը ևս մեկ անգամ: Ի՞նչ իմաստ ունի հրավիրել նրանց, եթե նրանք չեն ճանաչում արցախահայության ինքնորոշման և ազատ ապրելու իրավունքը, չեն դատապարտում Թուրքիայի և Ադրբեջանի ծավալած հակահայկական քաղաքականությունն ու ռասիստական քարոզարշավը, չեն դատապարտում հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը այդ պետությունների տարածքում, չեն ընդունում ցեղասպանության դիմաց փոխհատուցման որևէ գաղափար: Կարո՞ղ եք պատկերացնել, որ, ասենք, Իսրայելը հրավիրեր սիրիացի կամ իրանցի պատգամավորներին մասնակցելու իսրայելա-սիրիական կամ իսրայելա-իրանական հարաբերությունների մասին կնեսետում կազմակերպված լսումներին: Եվ կամ հակառակը՝ Սիրիան կամ Իրանը նույն նպատակով հրավիրեին իսրայելցի խորհրդարանականներին իրենց մոտ կազմակերպվող լսումներին: Առհասարակ, ի՞նչ իմաստ ունի հրավիրել թշնամի պետության պատգամավորներին Հայաստանի ազգային անվտանգության հետ կապված հարցերի քննարկումներին: Խորաթափանց դիվանագիտության անվան տակ անցկացվող նմանատիպ սիրախաղերը Թուրքիայի և Ադրբեջանի հետ լոկ գրգռում են նրանց ախորժակը, առաջացնում արհամարհանք և, ի վերջո, վատ ավարտվում հայերի համար (հիշենք թեկուզ Հայ Հեղափոխական Դաշնակցության համագործակցությունը երիտթուրքերի հետ): Ձեր հրավերն ընդունելու մերժումը ընդամենը ցույց է տալիս այդ արհամարհանքի աստիճանը: Այդ հրավերը ոչ թե դիվանագիտությունն ու բարի կամքի դրսևորում է, այլ միջազգային պրակտիկայում նախադեպը չունեցող անհեթեթություն՝ նոնսենս, հարգելի պատգամավորներ:

Այսպիսով, 1990-ական թթ.-ից ի վեր ՀՀ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ (ըստ այդմ էլ՝ գրեթե ողջ արտաքին քաղաքականությունը) մնացել է հիմնականում անփոփոխ:

- Նա չի վերանայվել 1993 թ. սկսված թուրքական շրջափակման կիրառումից անմիջապես հետո, ոչ էլ այդ շրջափակման 15-ամյա ընթացքում:

- Այդ քաղաքականության վրա ազդեցություն չի թողել Թուրքիայի Ադրբեջանին ցուցաբերած լայնածավալ ու սադրիչ աջակցությունը Հայաստանի դեմ պատերազմական նախապատրաստությունների գործում ու հենց պատերազմի ընթացքում:

- Հայաստանի այդ քաղաքականությունը չի փոփոխվել միջազգային ասպարեզում Թուրքիայի հակահայկական

քարոզչության ուժգնացումից և տարեց-տարի առավել մեծ ու կազմակերպված թափ ստանալուց հետո:

- Այդ քաղաքականությունը չի վերանայվել Թուրքիայի՝ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու 16-ամյա հրաժարման պատճառով, հրաժարում, որը բացի բացահայտ թշնամանքի դրսևորումից, նաև վկայում է հայոց պետականության գաղափարն իսկ ընդունելու Թուրքիայի դժկամությունը:

- Այդ քաղաքականությունը չի վերանայվել թուրքական պետության առաջին դեմքերի բերանով Հայաստանի հասցեին պարբերաբար հնչեցվող սպառնալիքներից հետո:

- Բնականոն հարաբերություններ հաստատելու Թուրքիայի առաջադրած կանխահայտորեն անընդունելի նախապայմանները ևս ի զորու չեն եղել փոփոխելու Հայաստանի Թուրքիայի նկատմամբ տարվող քաղաքականությունը: Նկատենք, որ տարբեր պահերի դրվել են տարբեր նախապայմաններ, այդ թվում Արցախը հանձնել Ադրբեջանին, հրաժարվել սեփական պատմությունից, մասնավորապես ցեղասպանության թեման միջազգային ասպարեզում, ինչպես նաև բուն Հայաստանում արժարժելուց, պաշտոնապես վերահաստատել Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, Մեդրիի միջանցքը դնել ադրբեջանական վերահսկողության տակ, հանձնել Հայաստանում երբեք ոտք չդրած Աբդուլահ Օջալանին (1999թ.), հրաժարվել Հայաստանի երբեք չունեցած միջուկային զենքից: Վաղը կարող են առաջ քաշվել բոլորովին նոր հնարովի նախապայմաններ:

- ՀՀ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ չի վերանայվել նաև Հայաստանի և Քուրդիստանի Բանվորական Կուսակցության միջև գոյություն չունեցող կապերի մասին թուրք պաշտոնյաների սուտ և վտանգավոր քարոզչություն ծավալելուց հետո: Միջդեռ թուրք-ադրբեջանական ստահող պնդումները Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում Քուրդիստանի Բանվորական Կուսակցության բազաներ ունենալու մասին հող են նախապատրաստում ծրագրվող ռազմական ներխուժման համար: Հայաստանի արտգործնախարարության անհասկանալի թերացումներից է նաև այդ կեղծիքները պատշաճ չզնահատելը և միջազգային հանրության ուշադրությունը դրանց վրա չսևեռելը¹⁰:

¹⁰ **Армен Айвазян**, “Лжеинформация о связи Армении и Курдской рабочей партии - возможная прелюдия к турецкому вторжению,” <http://www.regnum.ru/news/929158.html>, 07.12.2007 и *Новое время*, 11 December, 2007.

- ՀՀ քաղաքականությունը թուրքիայի նկատմամբ չի վերանայվել Ստամբուլում հայ լրագրողի սպանությունից հետո, սպանություն, որ, ըստ աստիճանաբար ամրապնդվող կարծիքների, կազմակերպել էին թուրքիայի պետական մարմինները, որոնք այժմ էլ իրականացնում են սպանության հետքերը սքողելու փորձեր՝ ընդհուպ մինչև փաստաթղթերի ոչնչացումը:

- ՀՀ քաղաքականությունը երբևէ հետաքրքրություն չի դրսևորել առ այն, որ այդ նորագույն ոճրագործության և դրա իսկական կազմակերպիչների չբացահայտված մնալու արդյունքում պոլսահայ համայնքը հայտնվել է ահաբեկված վիճակում:

Ո՞վ է այսպես կախարդել Հայաստանի Հանրապետության թուրքիայի հանդեպ տարվող քաղաքականությունը, ո՞վ է վարակել այն տևական ու վտանգավոր հավկուրությամբ, որն արդեն համաճարակի պես ընդգրկում է հայ հասարակության գրեթե բոլոր խավերը: Ե՞րբ է Հայաստանի քաղաքականությունը թուրքիայի նկատմամբ իրատեսական դառնալու: Ե՞րբ է Հայաստանի ղեկավարությունը գիտակցելու, որ թուրքիան Հայաստանի դեմ անսքող թշնամական քաղաքականություն է վարում, ունենալով պարզ ու հստակ մի նպատակ՝ **Հայաստանի ոչնչացումը**: Մի՞թե այս ճշմարտությունը հասկանալու համար անհրաժեշտ է թուրքական ռազմական ներխուժում, հայերի նոր կոտորած: Ի դեպ, սա այն միակ հակահայկական քայլն է, որ վերջին 17 տարիներին թուրքիան, իրենից անկախ պատճառներով, չի հաջողեցրել, բայց նպատակադրված է իրականացնելու իր կրտսեր դաշնակցի՝ Ադրբեջանի ձեռքերով:

Սովորաբար, Հայաստանի ղեկավարությունը բացատրում է իր թուրքիայի և առհասարակ Հայկական հարցի վերաբերյալ տարվող անբացատրելի զիջողական և կրավորական քաղաքականությունը իբր իրապաշտությամբ ու գործնապաշտ (*պրազմատիկ*) մոտեցումներով, որոնք, ինչպես տեսանք, առաջացրել են միայն թուրքերի քամահրանքը և նպաստել թուրքական ճնշումների շարունակությանը:

Այդ, այսպես կոչված, իրապաշտությունն ու գործնապաշտությունն արտահայտվում են մի շարք պարզունակ ու զավեշտական հարցադրումներով.

- *Եթե Հայաստանը հողային և այլ հատուցումների պահանջ ներկայացնի, թուրքիան Հայաստանին պատերազմ կհայտարարի.* – իրականում, թուրքիան Հայաստանին պատերազմ արդեն հայտարարել է և այն մղում է տեղեկատվական, հոգեբանական, գաղափարական ու տնտեսական ոլորտներում:

Իսկ Հայաստանն այդ պատերազմը չտեսնելու է տալիս, մինչդեռ հայտնի ճշմարտություն է՝ եթե պատերազմում չես կռվում, քեզ ջախջախում են: Թուրքիան ընդամենը զորքով չի հարձակվել Հայաստանի վրա, բայց այդ մի քայլից նրան հետ են պահում բոլորովին այլ պատճառներ, որոնցից մեկն է հիմնականները՝ սեփական խնդիրների առկայությունը, այդ թվում՝ քրդական ապստամբությունը, Հայաստանի անկախ պետություն լինելը և բանակ ունենալը, հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքը, ռուսական զորքի ներկայությունը, Եվրոպական Միություն մտնելու ցանկությունը, հայկական Սփյուռքի առկայությունը: Սակայն սա չի նշանակում, թե թուրքական վտանգը մեկընդմիջտ վերացել է, միջազգային կամ տարածաշրջանային վայրիվերումների դեպքում թուրքական վերնախավը կարող է ապագայում որոշել հարվածել Հայաստանին, նախընտրելով իր երկարաժամկետ ռազմավարական նպատակներին հասնելը միջազգային կարճաժամկետ դատապարտումից: Ամեն դեպքում, Թուրքիան այդպիսի քայլ կարող է անել անկախ Հայաստանի հողային պահանջ ներկայացնել-չներկայացնելուց: Հիշեցնենք նաև, որ 1993 թ. Թուրքիան ծրագրել էր ներխուժել Հայաստան¹¹, թեև այդ պահի դեկավարությունը հստակ հայտարարել էր Թուրքիայից որևէ տարածքային պահանջ չունենալու մասին:

- *Եթե Թուրքիան բավարարի Հայաստանի հողային հատուցման պահանջը, ապա ի՞նչ է անելու Հայաստանը. չէ՞ որ այդ հողերի վրա ապրում են 15-20 միլիոն քրդեր և թուրքեր.* – իրականում, մոտ ապագայում Թուրքիան Հայաստանին որևէ հողային զիջում չի անելու, որովհետև նա դեռևս ամուր պետություն է: Բայց ավելի մեծ ճնշում Հայաստանի նկատմամբ նույնպես չի կարող իրականացնել՝ բոլոր հնարավոր ճնշումներն արդեն փորձված են ու կիրառված: Մինչդեռ հողային հատուցման հիմնավորված պահանջը ժամանակի ընթացքում կարող է ստիպել Թուրքիային կատարելու ինչ-ինչ զիջումներ, թեկուզ Արցախի հարցում: Արդյո՞ք մենք պատրաստ կլինենք ընդունելու այդ զիջումները՝ ցույց կտա ապագան, իսկ առայժմ հողային պահանջը որևէ բանով չի վնասելու, այլ ընդհակառակն՝ ամրապնդելու է Հայաստանի դիրքերն Արցախի շուրջն ընթացող բանակցային գործընթացում:

- *Եթե Հայաստանը հողային և այլ հատուցումների պահանջ ներկայացնի, Թուրքիան դուրս կչարտի իր տարածքից այնտեղ աշխատող ՀՀ քաղաքացիներին.* – իրականում, Թուրքիայում աշխատող ՀՀ քաղաքացիները, ինչպես ևս մեկ անգամ ցույց տվեցին Հրանտ Դինքի սպանության հետ կապված

¹¹ **Армен Айвазян**, “Лжеинформация о связи Армении и Курдской рабочей партии - возможная прелюдия к турецкому вторжению”, укр. соч.

իրադարձությունները, առանց լավ գիտակցելու հայտնվել են պատանդի կարգավիճակում: Հայաստանի կառավարությունը պետք է պաշտոնապես կոչ անի նրանց՝ հնարավորինս արագ դուրս գալ թշնամի պետության թուրքիայի տարածքից: Եթե նրանք չանսան այդ դիմումին, ապա հետագա հնարավոր բարդությունների ողջ պատասխանատվությունը կընկնի այդ անհեռատես անհատների վրա: Պատանդի վիճակում է հայտնվել նաև պոլսահայ համայնքը:

Իրապաշտությունն ու գործնապաշտությունը պահանջում են Հայաստանի ղեկավարությունից թուրքիայի ուղղությամբ մշակել և որդեգրել նոր քաղաքականություն, որի հիմքում ընկած պետք է լինի Հայկական հարցի ճանաչումն ու ընդունումը: Այսօրվա դրությամբ Հայկական հարցն իրավական լուծում այդպես էլ չի ստացել. այն չի լուծվել ո՛չ Մոսկվայի, ո՛չ Կարսի (երկուսն էլ կնքվել են 1921 թ.), ո՛չ ԽՍՀՄ փլուզումից հետո ստորագրված որևէ պայմանագրի միջոցով, ինչը փաստվում է ներկայիս հեղհեղուկ ռազմավարական, իրավական ու քաղաքական իրադրությամբ: Այդ բազմաթիվ պայմանագրերից որևէ մեկը լիարժեք չի գործում և չի էլ կարող գործել, քանի դեռ Հայկական հարցը, այսինքն՝ Հայաստանի սահմանների և, ըստ այդմ, կենսունակության երաշխիքների խնդիրը չի լուծվել:

Հայկական հարցի հետագա զարգացումն անխուսափելիորեն բերելու է նոր պայմանագրերի ստորագրման, ըստ ամենայնի, ոչ միայն Արցախի ու ազատագրված տարածքների կտրվածքով, այլև հայ-թուրքական հարաբերությունների, Նախիջևանի և Հայաստանի բռնազավթված այլ տարածքների մասերով: Հողային հարցում այդ նոր պայմանագրերը կան պահպանելու են այսօրվա ստատուս-քվոն, կան լինելու են ավելի նպաստավոր Հայաստանի համար: Պակաս նպաստավոր լինելու պարագայում՝ Հայկական հարցի բնությունն ինքն է վիժեցնելու դրանց կենսագործումը, վաղ թե ուշ տարածաշրջանում առաջացնելով նոր սրացումներ, բախումներ ու պատերազմներ: Քանի դեռ հայ ժողովուրդն իր անկախ գոյությունն ապահովելու համար անվտանգության բավարար երաշխիքներ չի ստացել, տարածաշրջանում տարածքային հարցեր շոշափող որևէ պայմանագիր չի կարող իրավական հարատևություն ունենալ: Սա ուռա-հայրենասիրական լոզունգ չէ, որովհետև նման պայմանագրի խախտողը ոչ անպայմանորեն հայկական կողմը կլինի. Հայաստանի սահմանների ծայրահեղ խոցելիությունն ու պաշտպանական խորության բացակայությունը մշտապես զայթակղելու են ադրբեջանա-թուրքական դաշինքին՝ հարմար պահ գտնելու և ռազմական ուղիով մեկընդմիջտ «լուծելու» Հայկական հարցը՝ Հայաստանը վերացնելով:

Այսպիսով, հայ ժողովրդի հրաժարումը իր բնիկ հայրենիքից անհնար է ինչպես *ռազմավարական անհրաժեշտության*

տեսանկյունից, որի մասին արդեն խոսեցինք, այնպես էլ բարոյական ու հոգեբանական առումներով՝ այդպիսի անհմաստ՝ որևէ երկարատև ապահովություն չպարզևող հրաժարումը կկործանի հայերի հոգևոր ու պատմամշակութային աշխարհընկալման ողջ համակարգը, դարձնելով նրանց կամազուրկ և աննպատակ զանգված, որից հետո Հայկական հարցի թուրքական սցենարով վերջնական լուծումը այլևս առանձին ճիգեր չի պահանջի:

Իրականում, Թուրքիան այնքան ժամանակ չի հաշտվի իր սահմաններին հայկական պետականություն ունենալու հետ, որքան ժամանակ հույս կտածի, որ այդ պետականությունը կարելի է վերջնականապես ու մեկընդմիջտ խորտակել: Ցավոք, առայժմ այդպիսի հույսեր փայփայելու համար Թուրքիան որոշակի հիմքեր է տեսնում. այդ հիմքերից են՝

- Հայաստանի վախվորած ու կրավորական արտաքին քաղաքականությունը, Թուրքիային սիրաշահելու և բարեկամություն խոստանալու ապարդյուն փորձերը,

- Հայաստանի ներսում թուրքամետ ուժերի՝ «5-րդ զորայան», կայուն առկայությունը, կազմակերպվածությունը, անկաշկանդ գործունեությունն ու վայելած պետական հովանավորությունը,

- քարոզչության ու տեղեկատվության բնագավառում Հայաստանի պետական համակարգի կաթվածահարությունը,

- Հայաստանում հակահայրենասիրական-հակաազատագրական գաղափարախոսության ու հոգեբանության անզուսպ քարոզումն ու գրանցած առաջընթացը,

- պետական հաստատությունների անկատարությունն ու համընդհանուր կոռումպացվածությունը,

- շարունակվող արտագաղթը, ներգաղթի աննշան չափերը, տարերայնությունն ու պետական հովանավորությունից հիմնովին զուրկ լինելը,

- վերջապես, հայկական զինուժի վերահսկած 42000 քռ կմ-անոց տարածքին վճռականորեն տիրանալու և դրանք ամբողջովին վերահայացնելու՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների իշխանությունների կամքի բացակայությունը:

Բայց ճիշտ է և հակառակը. Թուրքիան այն ժամանակ կհաշտվի՝ ստիպված կլինի հաշտվելու, Հայաստանի պետականության գոյության հետ, երբ Հայաստանը ամենայն պատասխանատվությամբ տեր կկանգնի իր ճակատագրին, իր ժողովրդին, հայկական բանակի վերահսկած 42000 քռ կմ տարածքին, վարելով արդար ներքին և արժանապատիվ արտաքին քաղաքականություն, երբ իր դեմ սանձազերծված ադրբեջանա-թուրքական տեղեկատվական-հոգեբանական պատերազմում Հայաստանը ոչ թե ջայլամի քաղաքականություն կվարի, ինչպես այժմ է, այլ կդրսևորի պաշտպանվելու, ինչպես նաև հարձակվելու

կամք ու պատրաստվածություն, երբ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները կհասկացնեն ամբողջ աշխարհին, որ արյունով ազատագրված հայկական հողի որևէ թիզ այլևս երբեք չեն զիջելու՝ ոչ դարավոր թշնամուն, ոչ բարեկամի սքեմ հագած «խաղաղապահ զինուժին»:

Եզրափակենք: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, մերժելով ճանաչել Հայկական հարցը և նրա հողային բնույթը, շարունակում է արմատապես սխալ գնահատել իրական վտանգները և նրանց զսպման միջոցները: Տարածաշրջանում տիրող ռազմավարական իրականությունից այս կտրվածությունը հղի է ամենածանր հետևանքներով Հայաստանի և հայ ժողովրդի համար: Թուրք-այդրբեջանական դաշինքը զսպելու միակ հնարավոր *ինքնապաշտպանության քաղաքականությունը* որդեգրելու փոխարեն ընտրված է Հայաստանը ոչնչացնել ցանկացողների ապարդյուն խաղախեցումն ու սիրաշահումը, հայ հասարակությանը միակողմանի զիջումների պատրաստելը, միջազգային խոշոր դերակատարների վրա անառողջ հույսեր դնելը:

Հայաստանի արտաքին քաղաքականության գործնապաշտությունը ոչ թե Թուրքիայի ակնհայտ թշնամությունն անտեսելն է, այլ Հայկական հարցը համակողմանիորեն վերարժարծելը, ներառյալ տարածքային փոխհատուցման վերաբերյալ քաղաքականապես իրապաշտ առաջարկներով: Սա, իր հերթին, նախատեսում է արտաքին և ներքին քաղաքականության ամբողջական վերանայում, համազգային ինքնապաշտպանական ողջ ներուժի կենտրոնացում և կազմակերպում:

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ
քաղաքագիտության դոկտոր
«Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն
www.hayq.org

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ
ՈՒՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Նոր մտտեցումներ

**ՆԻԿՈՒԱՅ ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԳ ՉԱԱ թղթակից անդամ,
Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ**

Արդեն ակնհայտ է դառնում, որ օրեցօր ավելի մեծ չափեր են ընդունում Ադրբեջանի սպառնալիքները Հայաստանին: Մոլորություն կլինեք Ադրբեջանի պրեզիդենտ Իլիհամ Ալիևի եւ նրան պաշտպանող ադրբեջանական քաղաքական եւ զինվորական էլիտայի ռազմաշունչ հայտարարությունները դարաբաղյան խնդիրը ռազմական ուղիով՝ պատերազմի միջոցով լուծելու վերաբերյալ, փորձել բացատրել բացառապես ներքին սպառնան պահանջներով: Կարծում ենք, որ Ադրբեջանում դրա դարձն արդեն անցել է, մանավանդ Ադրբեջանի կողմից Հայաստանին հասցեագրված սպառնալիքներն ավելի ու ավելի նյութականացվում եւ առարկայական բնույթ են ստանում:

Այդ մասին են վկայում հետեւյալ փաստերն ու հանգամանքները.

Ադրբեջանի ֆինանսաբյուջետային հատկացումներն այսօր կազմում են մոտ 1 մլրդ ԱՄՆ դոլար, որը հավասար է Հայաստանի 2007թ. ամբողջ պետական բյուջեին եւ նշանակալիորեն զերազանցում է նրա ռազմական բյուջեն (ամերիկյան Stratfor վերլուծական կենտրոնի տվյալներով): Դա փոքր գումար չէ մի այնպիսի ոչ մեծ պետության ռազմական ծախսերը հոգալու համար, ինչպիսին Ադրբեջանն է: Հարկ է նկատի ունենալ, որ դրանք հրապարակավ ցույց տրվող ֆինանսական հատկացումներ են եւ չպետք է բացառել նաեւ այսպես կոչված զաղտնի կամ թաքնված հատկացումները: Մյուս կողմից պետք է նկատի առնել, որ Ադրբեջանի պետական բյուջեով կատարվող ռազմական հատկացումները տարեցտարի մեծանալու միտում ունեն եւ 1 մլրդ ԱՄՆ դոլարը բնավ էլ վերջին սահմանագիծը չէ: Իսկ նավթից ստացվող եկամուտները Ադրբեջանին արդեն այսօր իրավունք են տալիս իրականացնելու այդ հնարավորությունը՝ առանց որեւէ լարվածության: Stratfor վերլուծական կենտրոնի տվյալներով Ադրբեջանը սկսել է քայլեր կատարել իր

պաշտպանական բյուջեն հնգապատկելու եւ մինչեւ 5 մլրդ դոլարի հասցնելու համար:

Ադրբեջանի ղեկավարությունը մեծ հետեւողականությամբ կիրառում է ադրբեջանական բանակը արդիական զենքով վերազինելու քաղաքականություն: Բանակի համար Ադրբեջանը տարբեր աղբյուրներից, զանազան երկրներից գնում է մեծաքանակ արդիական առաջնակարգ զենք: Եվ որպեսզի իրեն կաշկանդված չզգա այդ հարցում եւ թույլ չտա որեւէ սահմանափակում ու օտարերկրյա տարբեր հանձնաժողովների վերահսկողություն կամ միջամտություն, Ադրբեջանը վերջերս պաշտոնապես հայտարարեց Եվրոպայում զենքի սովորական տեսակների վերաբերյալ պայմանագրից միակողմանիորեն դուրս գալու իր մտադրության մասին, որը նրան գործողությունների լայն ազատություն կտա իր բանակը վերազինելու հարցում:

Ադրբեջանն իր թիկունքում ունի մի այնպիսի հուսալի եւ հավատարիմ դաշնակից, ինչպիսին Թուրքիան է: Թուրքիան առաջնակարգ դեր է խաղում ադրբեջանական երբեմնի թույլ, անկազմակերպ եւ թափթփված բանակը ժամանակակից բանակի վերածելու խնդրում: Դա իրականացվում է առաջին հերթին սպայական համապատասխան կորպուս ստեղծելու միջոցով: Թուրքիայի ռազմական դպրոցներն իրենց դմները լայնորեն բացել են ադրբեջանական կիսագրագետ ասկյարների առջեւ՝ նրանցից ժամանակակից գրագետ սպա ստեղծելու համար: Եվ նրանք վերադառնալով Ադրբեջան արդեն գրավում են համապատասխան զինվորական պաշտոններ բանակում: Մխալ կլիներ այդ հանգամանքը հաշվի չառնել կամ թերագնահատել, որովհետեւ նոր պատերազմի դեպքում հայկական բանակն ամենայն հավանականությամբ իր դեմ կունենա նոր եւ ավելի պատրաստված ադրբեջանական բանակ:

Թուրքիան Ադրբեջանի համար համապատասխան սպայական կորպուս պատրաստելու հետ մեկտեղ, մեծ դեր է խաղում նաեւ ադրբեջանական բանակը նոր զենքով համալրելու եւ, որ ամենագլխավորն է, մեծապես օգնում է, որ ադրբեջանցի զինվորը կարողանա տիրապետել այդ զենքին: Իսկ դա կարող է բոլորովին նոր որակ հաղորդել ադրբեջանական զինված ուժերին:

Թուրքիան Ադրբեջանի համար քաղաքական ամպիոլանի լինելու հետ մեկտեղ, պատերազմի դեպքում կարող է կատարել եւս մեկ ֆունկցիա: Կարծում ենք, որ Ադրբեջանի կողմից պատերազմ սանձազերծելու դեպքում չպետք է բացառել Թուրքիայի անմիջական մասնակցության հնարավորությունը պատերազմին՝ Հայաստան ուղղակի ներխուժման ձեռով: Ժամանակակից միջազգային հարաբերություններում տիրապետող բարոյական, ավելի ճիշտ՝ անբարոյական նորմերի ու սկզբունքների տիրապետության պայմաններում նման

արագազնա ռազմական գործողություն միանգամայն հնարավոր է: Աշխարհը կոհտի այդ բոլորը, մի քանի նոտա կուղարկվի, կարվեն զանազան դատապարտող հայտարարություններ, կընդունվեն բանաձեւեր եւ վերջ: Այդ տեսակետի եւ տարբերակի հաստատումն են թուրքական սպառնալիքները Իրաքին՝ ագրեսիա իրագործել այնտեղ ապաստան գտած քրդական բանվորական կուսակցության մարտիկների դեմ: Այդ նպատակով Թուրքիան Իրաքի սահմանների մոտ կենտրոնացրել է ստվարաքանակ զինված ուժեր՝ ժամանակակից համապատասխան ռազմական տեխնիկայով հանդերձ, պատրաստ ներխուժելու Իրաք, որին ըմբռնումով է մոտենում ԱՄՆ-ը: Եվ, իրոք, թուրքական ռազմական ուժերը 2007թ. դեկտեմբերի 1-ին ներխուժեցին Յուսիսային Իրաք եւ ռազմական գործողություններ սկսեցին քրդական բանվորական կուսակցության մարտիկների դեմ: Ինչպես պաշտոնապես հայտարարել է թուրքական կառավարությունը, Թուրքիան իր ռազմական ուժերի ներխուժումը սուվերեն Իրաքի տարածք համարում է քրդերի դեմ ուղղված ռազմական գործողությունների իր ծրագրի էական մասը: Իսկ աշխարհն ըստ էության լռելյայն հանդուրժում է թուրքական ագրեսիան ընդդեմ ՄԱԿ-ի անդամ, անկախ Իրաքի պետության դեմ: Եվ ոգելորված դրանից, Թուրքիան 2008թ. փետրվար-մարտ ամիսներին կրկին իր զորքերը մտցրեց Իրաք՝ ծավալելով իսկական ռազմական գործողություններ քրդերի դեմ: Ընդ որում հարկ է նկատել, որ սա Սադդամ Յուսեյնի Իրաքը չէ, այլ այն Իրաքը, որտեղ ԱՄՆ-ի օգնությամբ հաստատվել է բոլորովին նոր վարչակարգ:

Երբ այս տեսանկյունից ենք մոտենում խնդրին, ապա տեսնում ենք, որ որոշ իմաստով եւ որոշ հարցերում Չայաստանը գտնվում է համեմատաբար անբարենպաստ վիճակում:

Մասնավորապես նկատի պետք է առնել հետեւյալ հանգամանքները.

Առաջին՝ Չայաստանի ռազմական բյուջեն զիջում է ադրբեջանականին: Իսկ դա նշանակում է, որ սպառնալիքությունների մրցավազքում հայկական բանակը հարատեւորեն արդիական գեների տեսակներով զինելու եւ վերազինելու հարցում Չայաստանը կարող է ունենալ լուրջ պրոբլեմներ:

Երկրորդ՝ Չայաստանի համար անբարենպաստ իրավիճակ է ստեղծվում հայկական բանակը համալրելու հարցում, որն արդյունք է հիմնականում երկու գործոնի: Առաջին՝ շարունակվող, թեւեւ ավելի դանդաղ տեմպերով, արտագաղթը, եւ, երկրորդ՝ ծնելիության անկումն ու մահացության համեմատաբար բարձր տոկոսը:

Երրորդ՝ Չայաստանը, ի տարբերություն Ադրբեջանի, իր թիկունքում չունի կանգնած մի այնպիսի երկիր, որը հուսալի

հենարան եւ դաշնակից լինելը, ինչպես թուրքիան Ադրբեջանի համար է: Այս տեսանկյունից արդարացված չէր լինի գերազանահատել Ռուսաստանի եւ ՀԱՊԿ-ի նշանակությունը, առավել եւս նրանց պատրաստակամությունն ու վճռականությունը պաշտպան կանգնել Հայաստանին՝ թուրքիայի լիակատար աջակցությունը վայելող Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ պատերազմ սկսելու պարագայում: Նրանց հուսալիությունը՝ որպես ռազմավարական դաշնակից, խիստ կասկածելի է:

Համոզված ենք, որ այդ բոլորը քաջ հայտնի է նաեւ Բաքվին, որտեղ կատարվում է համապատասխան վերլուծական աշխատանք: Ամենայն հավանականությամբ հենց այդ վերլուծության հիման վրա ադրբեջանական ղեկավարությունը հաստատ համոզված է, որ ժամանակն աշխատում է Ադրբեջանի օգտին, եւ ելնելով դրանից Ադրբեջանը սպառազինվելու հետ միասին վարում է նաեւ կոնֆլիկտի լուծումը ձգձգելու քաղաքականություն՝ այն հույսով, որ դա ուժասպառ կանի Հայաստանին:

Չորրորդ՝ Հայաստանը պետք է ելնի այն իրողությունից, որ ապագա պատերազմի ժամանակ մենք գործ ենք ունենալու այլ տիպի ադրբեջանական բանակի հետ եւ ամեն բան չէ, որ կընթանա նախկին սցենարով, ինչպես 1990-1994 թթ. պատերազմի ժամանակ:

Ահա այսպիսի պայմաններում Հայաստանի համար սուր բնույթ է ընդունում եւ կենսական անհրաժեշտություն դառնում հավելյալ ֆինանսական, նյութական եւ մարդկային ռեսուրսներ գտնելու հարցը: Դրա լուծման համար Հայաստանի հնարավորություններն այնքան էլ մեծ չեն եւ իրականում նրա ընտրությունը խիստ սահմանափակ է:

Այդ ոչ դյուրին խնդիրը լուծելու գործում իր որոշակի դերակատարումը կարող է ունենալ հայ սփյուռքը, եթե մշակվի համապատասխան իրատեսական քաղաքականություն եւ ձեռնարկվեն երկուստեք վճռական քայլեր հայության գոյության համար կենսականորեն անհրաժեշտ եւ իրատեսական ծրագրեր մշակելու ուղղությամբ:

Սակայն նախքան այդ հարցը լուսաբանելն անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե սփյուռքն ընդհանրապես ի վիճակի՞ է լուծել նման բարդ խնդիրներ: Դրան դրական պատասխան է տալիս հրեական սփյուռքը, որի պատմական փորձը կարելի է համարել դասական: Կարծում ենք, որ հրեական փորձի համեմատական՝ կոմպարատիվ, ուսումնասիրությունը, որոշ վերապահումներով, կարող է օգտակար լինել նաեւ հայ սփյուռքի՝ որպես գործոնի կարողություններն օգտագործելու համար՝ հայության ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հրեական սփյուռքը որպես կառույց սկսել է ձևավորվել XVIII վերջերին-XIX դարի սկզբներին, երբ 1789 թ. ֆրանսիական հեղափոխության ազատական եւ ժողովրդավարական գաղափարները հաղթանակեցին ու տարածում գտան ոչ միայն Ֆրանսիայում, այլեւ եվրոպական մի շարք երկրներում: Դա հնարավորություն տվեց վերացնելու հրեաների նկատմամբ կիրառվող բազմաթիվ սահմանափակումները եւ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեց նրանց քաղաքական, տնտեսական եւ մշակութային գործունեության համար: Տեղի ունեցավ հրեաների ազգային ինքնագիտակցության արթնացման, կազմավորման եւ զարգացման աննախադեպ թռիչք: XIX դարի երկրորդ կեսին հրեական առանձին, ցաքուցրիվ համայնքներն արդեն սերտ կապերի մեջ էին միմյանց հետ եւ կարելի է խոսել հրեական սփյուռքի ձևավորման մասին, որի կենտրոնը գտնվում էր Եվրոպայում: Նրանց միջեւ կապերն այն աստիճան էին ամրապնդվել, որ հրեաների առջեւ արդեն ծառայել էր մեկ համահրեական կենտրոն, կառույց ստեղծելու հարցը: Մեկ միասնական համահրեական կազմակերպություն ստեղծելու գաղափարը եւ նրա իրագործումը կարելի է համարել հրեաների շարժման առաջին խոշոր պատմական նվաճումը:

Համահրեական կազմակերպության ստեղծման խնդիրը հրեաները, չնայած տարածայնություններին եւ նրանց շարքերում գոյություն ունեցող տարբեր հոսանքների, լուծեցին փայլուն կերպով, հասկանալով, որ նրանց ուժը միասնության եւ համախմբված լինելու մեջ է: 1897թ. Բազելում հավաքված հրեական առանձին կենտրոնների ներկայացուցիչների կոնգրեսը հռչակեց Սիոնիզմի համաշխարհային կազմակերպության (ՍՀԿ) ստեղծումը, որի ակունքների մոտ կանգնած էր հրեա լրագրող Թեոդոր Յերցլը: Նրա հեղինակած Հրեական պետությունը դարձավ սիոնիստական շարժման Բիբլիան, որը հաջորդ տասնամյակների ընթացքում ուղենիշ դարձավ աշխարհի բոլոր հրեաների համար:

ՍՀԿ-ն կուռ կառույց էր, ուներ իր գերագույն մարմինները, քաղաքական, տնտեսական, ֆինանսական, քարոզչական, ապա նաեւ ռազմական, այդ թվում եւ ահաբեկչական բաժինները, տեղական բաժանմունքները եւ այլն:

Հրեական սփյուռքի կազմավորումը եւ ՍՀԿ-ի ստեղծումը նախորդել է հրեական պետության ստեղծմանը: Դա հանդիսանում է հրեական սփյուռքի կարեւոր առանձնահատկություններից մեկը: Ուստի հրեական սփյուռքի եւ ՍՀԿ-ի գլխավոր խնդիրը դարձավ հրեական պետության ստեղծումը եւ այնտեղ հրեաներին հավաքելը, որը նույնպես մեծ հաջողությամբ իրագործվեց: Նրանց հավաքավայր ընտրվեց Պաղեստինը: ՍՀԿ-ի գլխավորությամբ հրեական սփյուռքը կարողացավ իրագործել «Հող չունեցող ժողովրդին տալ հող»

առանց ժողովրդի» ծրագիրը: Դա նշանակում էր հրեաներին, որոնք հող կամ տարածք չունեին, տալ հող (տարածք)՝ նրանում բնակվող պաղեստինցի արաբներին դուրս մղելով իրենց երկրից: Հրեական սփյուռքը եւ նրա ղեկավարող մարմինը ՍՀԿ-ն մոտ 50 տարվա ընթացքում կարողացան հասնել իրենց նպատակին եւ 1948թ. մայիսի 15-ին հռչակվեց Իսրայել պետությունը: Դրանով ավարտվեց հրեական սփյուռքի պատմական առաքելության առաջին փուլը:

Իսրայել պետության հռչակումից հետո հրեական սփյուռքը, սակայն, ձեռքերը չլվաց եւ չքաշվեց մի կողմ եւ չվերածվեց կողմնակի դիտորդի, որը նայում էր, թե ինչպես է Իսրայելը միայնակ մաքառում իր գոյության համար: Ընդհակառակը, դրան հաջորդեց հրեական սփյուռքի պատմական առաքելության երկրորդ փուլը, որի հիմնական նպատակն է քաղաքական, ֆինանսական, նյութական եւ ռազմական ամենալայն աջակցությամբ օգնել Իսրայելին պահպանելու իր գոյությունը, հաղթահարել բազմապիսի դժվարություններ, ոտքի կանգնել եւ դառնալ ամուր եւ զարգացած պետություն: Հրեական սփյուռքի այդ առաքելությունը մինչ օրս շարունակվում է:

Ինչպես առաջին փուլում՝ մինչեւ հրեական պետության ստեղծումը, այնպես էլ երկրորդ փուլում, ՍՀԿ-ի կարելուր խնդիրն է համարվում զանազան թույլատրելի եւ անթույլատրելի միջոցներով հրեաներին տեղափոխել, հավաքել եւ կենտրոնացնել Իսրայելում: Հրեական սփյուռքը եւ նրա զանազան կազմակերպությունները երբեք չեն խրախուսում հրեաների արտագաղթը Իսրայելից: Ընդհակառակը, ՍՀԿ-ի եւ նրա շուրջը համախմբված հրեական ուժերը իրենց գլխավոր նպատակը շարունակում են համարել կանխել արտագաղթը եւ ավելի լայն թափ հաղորդել Իսրայելում հրեահավաք գործունեությանը:

Իսրայել պետության ստեղծումից հետո փոխվեցին փոխհարաբերությունները Իսրայել պետության եւ ՍՀԿ-ի միջեւ: Եթե մինչեւ Իսրայել պետության ստեղծումը հրեական սփյուռքի ղեկավար մարմինը ՍՀԿ-ն էր, որի որոշումները պարտադիր էին բոլորի, այդ թվում եւ արդեն Պաղեստինում կենտրոնացված հրեաների համար, ապա հրեական պետության ստեղծումից հետո ՍՀԿ-ն այլևս չի հանդիսանում հրեաների առաջատար եւ զերագույն կառավարող մարմինը: Պետության կազմավորումից հետո նա այլևս նման դեր չէր կարող կատարել եւ առաջնության դափնին զիջեց պետությանը: Համահրեական կառավարման կենտրոնը տեղափոխվեց Իսրայել: Այդ պահից սկսած վճռական խոսքը պատկանում է իր հողն ունեցող եւ այդ հողի վրա բնակվող ժողովրդին ու նրա շահերն արտահայտող պետությանը:

Դա, իհարկե, չի նշանակում, թե հրեա սփյուռքը կամ ՍՀԿ-ն կորցրել են իրենց դերն ու նշանակությունը եւ այլևս պետք չեն

Իսրայելին: Սխալ կլիներ նման եզրակացության հանգել: Խոսքն այստեղ այն մասին է, որ հրեական սփյուռքն այժմ կատարում է օժանդակ դեր եւ իր գործունեությունը համաձայնեցնում է Իսրայելի ղեկավարության հետ՝ ելնելով պետականություն ունեցող հրեաների ազգային, քաղաքական, տնտեսական եւ միջազգային շահերից:

Հրեական փորձը ցույց է տալիս, որ սկզբունքորեն հնարավոր է աշխարհի տարբեր երկրներում ցրված, տարբեր պետական կառուցվածք ունեցող երկրներում, տարբեր ռեժիմների պայմաններում եւ տարբեր կրոնական միջավայրերում բնակվող էթնիկական խմբերին, որոնք կազմում են տվյալ սփյուռքը, իրագործել մի այնպիսի բարդ, անգամ անհավանական թվացող խնդիր, ինչպես սեփական պետություն ստեղծելը կամ արդեն գոյություն ունեցող իրենց պետությունը պահպանելը եւ հզորացնելը:

Սակայն յուրաքանչյուր սփյուռք ունի իր յուրահատկությունները, առանձնահատկությունները, սեփական ուրույն խնդիրները, գործելու եղանակները, մեթոդները, ավանդույթները եւ այլն, որոնք անխուսափելիորեն իրենց կնիքն են դնում տվյալ սփյուռքի գործելակերպի եւ դերակատարման վրա:

Դա վերաբերում է նաեւ հայ սփյուռքին:

Հայ եւ հրեա սփյուռքների առաքելության կոմպարատիվ վերլուծությունը ցույց է տալիս թե նմանությունների, եւ թե տարբերությունների առկայությունը նրանց միջեւ: Այդ համեմատությունից պարզ է դառնում հետևյալը.

Առաջին հայ սփյուռքը՝ ի տարբերություն հրեականի, երբեք իր առջեւ խնդիր չի դրել ու չէր էլ կարող ստեղծել հայկական պետություն: Նա երբեք չի ունեցել եւ չէր էլ կարող ունենալ հրեաների համար կիրառելի այնպիսի մի նախագիծ, ինչպես «Հող չունեցող ժողովրդին (այսինքն հայերին-Ն. Հ.) տալ հող՝ առանց ժողովրդի», մի նախագիծ, որը բոլորովին էլ պիտանի չէր հայերի համար: Դա բացատրվում է այն պարզ պատճառով, որ հայերը ազգային, քաղաքական եւ տերիտորիալ առումներով՝ համեմատած հրեաների հետ, գտնվում էին բացարձակապես տարբեր եւ անհամեմատելի պայմաններում՝ ուստի եւ հետապնդում էին միանգամայն տարբեր նպատակներ:

Երկրորդ՝ հայերի ճնշող մեծամասնությունը դարեր շարունակ գտնվել է, այսինքն՝ տիրապետել, ապրել, աշխատել, ստեղծագործել եւ բազմացել է իր սեփական հողի վրա, իր սեփական երկրում՝ Հայաստանում, որը նրա բնօրրանի անվանումն է: Անգամ բաժանված լինելով Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանի ու գտնվելով համապատասխանաբար Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների կազմում, միեւնույն է, նա գտնվել է իր սեփական հողի վրա: Իսկ այդ ընթացքում

արտասահմանյան որոշ երկրներում գոյություն ունեցած ոչ մեծաթիվ հայկական առանձին համայնքները լոկ կոգյակներ էին, առանձին եւ միմյանցից անջատ գոյություն ունեցող փոքր խմբեր, որի համար նույնպես անհիմաստ էր իր առջեւ դնել մի այնպիսի խնդիր, ինչպես հող չունեցող հայերին հող տալն էր, որը միանգամայն հասկանալի էր հրեաների պարագայում, բայց ոչ հայերի:

Այս իրավիճակը հայերի արեւմտյան հատվածի համար իր հիմնական գծերով պահպանվել է ընդհուպ 1915թ. ցեղասպանությունը եւ նրան հաջորդած մի քանի տարիները:

Երրորդ ժամանակակից հայ սփյուռքը ձևավորվել է 1915-1920թթ., երբ Արեւմտյան Հայաստանը դատարկվեց երիտթուրքական ջարդարարների ցեղասպան քաղաքականության արդյունքում: Նրա բեկորները հաստատվեցին Արաբական Արեւելքում, որտեղից այնուհետեւ տարածվեցին ի սփյուռս աշխարհի:

Ժամանակագրական առումով դա համարյա համընկավ Արեւելյան Հայաստանում հայոց պետականության վերականգնման հետ՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության, որը գոյատևեց 1918թ. մայիսից մինչեւ 1920թ. դեկտեմբերը: Հետեւաբար, իր առաջին դողդոջուն քայլերը կատարող հայ սփյուռքը, որին նույնիսկ չի կարելի համարել ձեւավորված սփյուռք, չէր կարող առաջադրել հայկական պետություն ստեղծելու հարցը, քանի որ այդ պետությունն արդեն կար, որը կերտել էր նրա տարածքում բնակվող հայությունը, եւ սփյուռքը՝ ի տարբերություն հրեական զուգահեռի, նրանում ոչ մի մասնակցություն չի ունեցել:

Դա հայ սփյուռքի տարբերակիչ գծերից մեկն է:

Զորորդ շնորհիվ այդ հանգամանքի՝ Հայ-Սփյուռք-Հայոց Պետություն շղթայում հայոց պետությունը հենց սկզբից իր վրա վերցրեց առաջատարի դերակատարումը՝ ի տարբերություն հրեական սփյուռքի, որին պատկանում է առաջատար դերակատարում հրեական պետության ստեղծման գործում:

Այդ պատճառով էլ Հայոց պետությունն սփյուռքի հետ իր հարաբերություններում ավելի անկախ է եւ կարող է գործել ավելի անկաշկանդ ու ազատ: Դրան նպաստում է նաեւ այն ընդունված տեսակետը, որ իրավունքը հողի վրա ապրողինն է:

Հինգերորդ հայ սփյուռքի ձեւավորումն ընթացել է տանջալից ուղիով: Սկզբնական շրջանում նա առաջին հերթին մտահոգ էր իր գոյությունը եւ ինքնությունը պահպանելու խնդրով: Նրա համար այդ շրջանում մնացած բոլոր հարցերը, այդ թվում եւ Մայր Հայրենիքին օգնելու խնդիրը մղված էր երկրորդական պլան: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ նա դա չէր ցանկանում, այլ պարզապես նա դրա հնարավորությունը չուներ: Բայց աստիճանաբար, հաղթահարելով բազում քաղաքական,

տնտեսական, լեզվամշակութային խնդիրներ, Հայ սփյուռքը կարողացավ ոտքի կանգնել, շտկել իր մեջքը եւ առօրյա հոգսերից բացի հետաքրքրվել նաեւ համահայկական հարցերով: Այդ փուլը նա անցավ 1920-1945թթ., որին հաջորդեց նրա զարգացման, ամրապնդման, հյուրընկալ երկրներում նրա դիրքերի ամրապնդման փուլը: Նոր հեռանկարներ էին բացվում նաեւ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում: Հայ Սփյուռքն ավելի ու ավելի էր իր հայացքն ուղղում դեպի Մայր հայրենիք, որի ամենացայտուն արտահայտությունը եղավ հայերի 1946-1948թթ. զանգվածային ներգաղթը Հայաստան:

Սակայն այդ ներգաղթը չպետք է դիտել բացառապես սփյուռքի գործողության արդյունք: Դա ավելի շատ Խորհրդային Հայաստանի՝ Հայկական Երկրորդ Հանրապետության պետական գործունեության արդյունք էր, որը նշանակում էր, որ նոր փուլ էին մտնում Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: Այդ պահից սկսվում է Մայր հայրենիքի կողմից սփյուռքահայության նկատմամբ հոգատարություն ցուցաբերելու քաղաքականությունը, որն ավելի է ընդգծում Հայաստան-Սփյուռք շղթայում Հայաստանի առաջնայնության հանգամանքը: Սակայն դա հետագայում չունեցավ իր ամբողջական զարգացումը, որն ունի իր դրդապատճառները:

Հայ սփյուռքին այդպես էլ չհաջողվեց՝ ի տարբերություն հրեական սփյուռքի, վերածվել համախմբված կուռ կառույցի՝ իր համասփյուռքյան ինստիտուտներով: Նրան չհաջողվեց ստեղծել, ինչպես հրեաներին, իրենց Համահայկական համաշխարհային կազմակերպությունը՝ ՀՀԿ, որպես սփյուռքը ղեկավարող, նրա աշխատանքները համադրող կառույց՝ իր քաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլ ենթակառույցներով: Սիոնիստական համաշխարհային կազմակերպության եւ նրա թիկունքում կանգնած հրեության ուժը նախ եւ առաջ նրանց կազմակերպվածության եւ նրանց պայքարին համապատասխան համազգային բնույթ հաղորդելու մեջ է: Այդ շարժումից համարյա որեւէ հրեա դուրս չմնաց: Մինչդեռ հայերի պարագայում իրադրությունն այլ կերպ ձեւավորվեց:

Հայ սփյուռքի ներսում, հարկավ, հասկանում են միասնության անհրաժեշտությունը: Այդ մասին քիչ չի գրվել սփյուռքահայ մամուլում եւ քիչ բան չի ասվել սփյուռքահայ զանազան գործիչների կողմից: Այդուհանդերձ, հայ սփյուռքն ընթացավ այլ ուղիով: Սփյուռքում իրենց գործունեությունը ծավալեցին ավանդական քաղաքական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար ազատական կուսակցությունը, Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ապա ասպարեզում հայտնվեցին նաեւ հայ համայնավարները: Նրանցից յուրաքանչյուրը հետապնդում էր իր նեղ կուսակցական շահերն ու նպատակները եւ հենց դրանով իսկ

բաժանվածության սկզբունքը ներդնում սփյուռքահայ իրականության մեջ ու խոչընդոտում սփյուռքը մեկը ամբողջական կուռ կառույցի վերածվելուն, թեև հայերն իրենց առջև ունեին հրեաների օրինակը: Այդ իրավիճակն ըստ էության պահպանվում է մինչև օրս:

Սփյուռքի պառակտվածությունն ավելի խորացավ, երբ այդ կուսակցությունները եւ նրանց հարող քաղաքական ուժերը ստեղծեցին իրենց համապատասխան կրթական, դպրոցական, մշակութային, անգամ մարզական մարմինները, որոնց նպատակը նրանցում ներգրավված հայությանը տվյալ կուսակցության ղեկավարման ներքո նվիրվածության ոգով սնելն ու կրթելն էր, որն ինքնաբերաբար հանգեցնում էր հակառակ կուսակցության արժեքների ժխտմանը:

Սփյուռքի միասնականությանը եւ համախմբման գաղափարին ու գործին ծանր հարված հասցրեց Հայ Առաքելական եկեղեցու պառակտումը, որն իրագործվեց 1956թ. ՀՀ Դաշնակցության այն ժամանակվա ղեկավարության անմիջական մասնակցությամբ: Դա իր հերթին եկավ ավելի խորացնելու սփյուռքի պառակտումը:

Վերոնշյալ հանգամանքների բերումով՝

ա) Հայ սփյուռքն իր մեջ ուժ չգտավ վեր կանգնելու կուսակցական, անձնական եւ հատվածային նեղ շահերից,

բ) ստեղծել համասփյուռքյան ամբողջական, համապարփակ եւ հեղինակավոր կազմակերպություն,

գ) զրկվեց իր քաղաքական, տնտեսական եւ ֆինանսական ներուժն ամբողջությամբ դրսեւորելու, իսկ անհրաժեշտության դեպքում այն պաշտպանական-դիմադրողական ուժի վերածելու հնարավորությունից:

Այդ բոլորի արդյունքում Հայաստանը զրկվեց ի դեմս սփյուռքի կազմակերպված, համախմբված եւ գորեղ գործընկերոջից, որը կարող էր զգալիորեն բարելավել ինչպես Հայաստանի, այնպես էլ սփյուռքի միջազգային կարգավիճակը եւ բարձրացնել հայկական քաղաքական եւ ռազմական գործունի արժեթղթերը միջազգային՝ հատկապես տարածաշրջանային հարաբերությունների քաղաքական բորսայում:

Այդ նույն պատճառներով չձեւավորվեց Հայ Սփյուռքը ներկայացնող մեկ համահայկական մարմին, որը դառնար Հայաստանի գործընկերը, որի հետ նա կարողանար քննարկել Հայաստանին եւ սփյուռքին, համայն հայությանը հետաքրքրող հարցերը, ընդունել համապատասխան որոշումներ, ապահովել նրանց կենսագործումը, եւ՝ ի հարկին սփյուռքահայությանը եւ նրա խնդիրները ներկայացնել միջազգային աստիճաններում: Այդ ֆունկցիան չեն կարող կատարել ոչ «Հայաստան» հիմնադրամը, եւ ոչ էլ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, քանի որ նրանց խնդիրներն այլ են եւ նրանք բոլորովին այլ նպատակներ են հետապնդում:

Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ կապերի ամրապնդման ու նրանց համագործակցության ճանապարհին լուրջ խոչընդոտ հանդիսացան նաեւ սառը պատերազմը եւ նրա պայմաններում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերած գաղափարական հակամարտությունը: Սառը պատերազմի հետեւանքով Խորհրդային Միության մաս կազմող Խորհրդային Հայաստանը եւ սփյուռքահայ մի շարք կուսակցություններ, քաղաքական, հասարակական եւ մշակութային կազմակերպություններ հայտնվեցին բարիկադների տարբեր կողմերում: Այդպիսի պայմաններում խոսել Հայաստան-Սփյուռք համակարգված հարաբերությունների, առավել եւս՝ համագործակցության մասին, կարծում ենք ավելորդ է: Մինչդեռ հրեական սփյուռքի եւ Իսրայել պետության պարագայում սառը պատերազմի դարաշրջանում նման երկփեղկվածություն չառաջացավ, քանի որ նրանք պատկանում են արեւմտյան ճամբարին:

Այս հարցում Հայաստան-հայ սփյուռք շղթան ակնհայտորեն զիջում է Իսրայել-հրեական սփյուռք շղթային:

Երկար ժամանակ կապերը Հայաստանի եւ սփյուռքի միջեւ իրագործվել են զլխավորապես կրթական եւ մշակութային համագործակցության ձեւով, որը թեւեւ արժանի է բարձր գնահատականի, սակայն բավարար չի կարելի համարել:

Հայաստանի եւ սփյուռքի միջեւ կապերը զարգանալու եւ ամրապնդվելու մեծ հեռանկարներ ու հնարավորություններ բացվեցին 1991թ. Հայաստանի անկախության նվաճումից հետո: Ստեղծվեցին նոր պայմաններ եւ առաջացան նոր խնդիրներ, որոնք պահանջում են նոր մոտեցումներ: Ահա այստեղ է, որ կարող է օգտակար լինել հրեաների պատմական փորձը՝ ի մասնավորի հրեական սփյուռքի դերակատարումը Իսրայել պետության ստեղծումից հետո, երբ հրեական սփյուռքը գերագույն ճիգերով օգնեց եւ սատար կանգնեց Իսրայել պետությանը պահպանելու եւ պաշտպանելու իր անկախությունն ու անվտանգությունը, թիկունք կանգնեց դիմակայելու հինգ անգամ արաբների հետ պատերազմի մեջ հայտնված Իսրայելին, զարգացնելու երկրի տնտեսությունը, գիտությունը, մշակույթը եւ ընդհանրապես ամրապնդելու Իսրայելի միջազգային դիրքերը՝ Իսրայելի որպես համայն հրեության պետության դիրքերը:

Հանուն արդարության պետք է արձանագրել, որ սառը պատերազմի դարաշրջանի ավարտից եւ Հայաստանի անկախության հռչակումից հետո զգալի տեղաշարժեր կատարվեցին Հայաստան-Սփյուռք հարաբերություններում: Ակտիվացավ սփյուռքի առանձին համայնքների լրբփստական գործունեությունը՝ առաջին հերթին ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում՝ հօգուտ նորանկախ հայկական պետության: Դա ընդհանրապես նորություն էր սփյուռքի որոշ համայնքների համար, քանի որ մինչ այդ անկախ Հայաստան պետություն չկար, որի համար նրանք

պայքարեին: Այդ բնագավառում բոլորի համար դասական օրինակ կարող է ծառայել հրեական սփյուռքը, որը որոշ երկրներում՝ առաջին հերթում ԱՄՆ-ում, դարձել է պետություն պետության ներսում:

Աշխուժություն է նկատվում Հայաստանում սփյուռքահայ կապիտալի ներդրման գործում, թեև դա դեռևս շատ հեռու է բավարար համարվելուց:

Սփյուռքն իր լիակատար քաղաքական եւ բարոյական համերաշխությունը դրսևորեց դարաբաղյան հակամարտության ընթացքում, եւ, թեկուզ չափավոր սահմաններում, այդուհանդերձ, մասնակցեց այդ հակամարտությանը, եւ այլն:

Սակայն այդ բոլոր շատ հեռու է բավարար համարվելուց՝ հաշվի առնելով սփյուռքի ներուժը: Բացի այդ, ինչ որ կատարվում է, դա համակարգված աշխատանքի արդյունք չէ, այլ շատ հաճախ անհատական ձեռներեցության, ցանկության, կամեցողության եւ պատրաստակամության դրսևորում:

Նոր սպառնալիքները եւ նարտահրավերները եւ Հայաստանի Հանրապետության առջեւ ներկա փուլում կանգնած քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու ռազմական խնդիրները պահանջում են նոր մոտեցումներ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների հարցում՝ նրա ներուժը լիակատար կերպով օգտագործելու համար, որից զգալիորեն կախված է հայության, այդ թվում եւ սփյուռքահայության անվտանգությունն ու ապագան:

Սակայն դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է գտնել համապատասխան կազմակերպչական նոր ձևեր:

1. Մենք հեռու ենք այն մտքից, թե մոտ ապագայում, անգամ հեռանկարում, հնարավոր է սփյուռքում ստեղծել մեկ միասնական համահայկական կառույց, ինչպես հրեաները ժամանակին ստեղծեցին ՄՀԿ-ը, մի կազմակերպություն կամ մարմին, որն իրավագոր լիներ հանդես գալու համայն սփյուռքահայության անունից, նրա անունից որոշումներ ընդուներ, որոնք պարտադիր լինեին ամբողջ սփյուռքահայության համար եւ իրագործվեին նրա կողմից, եւ որի հետ կարողանար համագործակցել Հայաստանի ղեկավարությունը:

2. Մենք թերահավատությամբ ենք վերաբերվում նաեւ վերջերս Հայաստանում (բայց ոչ սփյուռքում) ներգաղթի վերաբերյալ ավելի ու ավելի հաճախ եւ բարձրաձայն հնչող կոչերին: Կարծում ենք, որ դրանք ավելի շատ պոպուլիստական մոտեցումներ են, քանի որ ներգաղթի իրական հնարավորություն չկա: Դրան պատրաստ չէ ո՛չ սփյուռքը, եւ ո՛չ էլ Հայաստանը: Պետք է հաշվի առնել 1946-1948թթ. ներգաղթի դառը փորձը, որը հիմնովին վարկաբեկեց ներգաղթի սկզբունքորեն ընդունելի գաղափարը: Դրա հետ միասին պետք է նշել, որ նոր ներգաղթը չի կարող լուծել մեր առջեւ կանգնած խնդիրները:

Ահա այսպիսի պայմաններում առաջին պլան են մղվում կազմակերպչական հարցերը, որոնց ճիշտ լուծումը շատ էական է Հայաստան-Սփյուռք հարաբերությունները բարձրացնելու նոր մակարդակի վրա եւ այդ հարաբերությունները դարձնել գործնական :

Ելնելով վերոնշյալից, նպատակահարմար ենք գտնում`

Առաջին` Հայաստանը հայտարարել Ամենայն հայոց պետություն` համապատասխան փոփոխություն մտցնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեջ:

Երկրորդ` ստեղծել Հայաստան-Սփյուռք համատեղ մարմին, որը, պայմանականորեն կարելի է կոչել «Հայաստանի եւ Սփյուռքի հարաբերությունները համադրող համատեղ մարմին» (ՀՍՀՅ) կամ «Հայաստան-Սփյուռք Խորհրդատու մարմին» (ՀՍԿՄ), որի նախագահը Հայաստանի Հանրապետության պրեզիդենտն է: Դա կարելի է դիտել որպես անցումային շրջանին համապատասխանող մարմին, մինչեւ որ համապատասխան նախադրյալներ ստեղծվեն Հայաստան-Սփյուռք համահայկական համապարփակ մարմնի (կազմակերպության) լույս աշխարհ գալու համար:

ՀՍՀՅ-ն իր կազմում որպես ենթակառուցվածք, կարող է ունենալ քաղաքական, ռազմական, տնտեսական, ֆինանսական, գիտական, մշակութային եւ այլ հանձնաժողովներ:

2. ՀՍՀՅ-ն համալրվում է (ընտրվում կամ նշանակվում) Հայաստանի եւ Սփյուռքի ականավոր պետական, քաղաքական, հասարակական, կրոնական, մշակութային գործիչներից, գործարարներից` պարիտետի` հավասար ներկայացուցչության սկզբունքի հիման վրա:

Երրորդ` ՀՍՀՅ-ն որոշումներն ընդունում է համաձայնության (կոնսենսուսի) սկզբունքով եւ բացառվում է պարտադրանքը:

Չորրորդ` ՀՍՀՅ-ն քննարկում եւ համապատասխան որոշումներ է ընդունում հայությանը վերաբերող բոլոր առանցքային հարցերի վերաբերյալ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն Հայաստանի անկախության ամրապնդմանը, հայության ազգային անվտանգության ապահովմանը, տնտեսական բարգավաճմանը, կրթության եւ մշակույթի զարգացմանը, սփյուռքահայության ինքնության պահպանմանը:

Հինգերորդ, ՀՍՀՅ-ն քննարկում եւ հաստատում է հայության համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող հարցերի լուծման առաջնահերթությունները, նշում դրանց իրագործման ուղիները եւ լուծում դրանց ֆինանսավորումն ապահովելու հարցերը:

Վեցերորդ, հաշվի առնելով Հայաստանի հանդեպ ուժեղացող արտաքին` գլխավորապես թուրք-ադրբեջանական սպառնալիքները, որի դրսեւորումը հանդիսացավ 2008թ. մարտի

2-ին ադրբեջանական բանակի կողմից զինադադարի խախտումը եւ մի կաճ միջոցի Մարտակերտի շրջանում պաշտպանական ամրության գրավումը, ներկա փուլում առաջնահերթ եւ անմիջական խնդիր համարել Յայ Սփյուռքի ավելի ակտիվ մասնակցությունը Յայաստանի՝ Ամենայն Յայոց Պետության պաշտպանունակության ամրապնդմանը:

Դրա իրականացման ուղիները համարել.

1. Սփյուռքի մասնակցությունը Յայաստանի եւ Ղարաբաղի բանակները զենքի արդիական տեսակներով համալրելու գործում:

2. Սփյուռքի օգնության մեծացումը Յայաստանի ռազմական արդյունաբերությունը զարգացնելու գործում:

3. Կրճատել քաղաքացիական կառույցների նպատակով Յայաստան հիմնադրամին հատկացվող ծախսերը եւ ավելացված ֆինանսական միջոցներն ուղղել Յայաստանի եւ Ղարաբաղի պաշտպանության ամրապնդմանը:

3. Յամապատասխան ուղիներ եւ ձեւեր փնտրել սփյուռքահայ երիտասարդությանը հաղորդակից դարձնելու ռազմական գործին, ելնելով այն իրողությունից, որ Յայաստանին եւ Ղարաբաղին ռազմական սպառնալիքների կամ նրանց վրա հավանական հարձակման պարագայում հնարավոր լինի օգտագործել նրանց ներուժը:

Թերեւս նպատակահարմար կլիներ այդ նպատակով. ա) օգտագործել սփյուռքահայ երիտասարդների ամառային արձակուրդները եւ հանգիստը Յայաստանում անցկացնելու հնարավորությունը, բ) կազմակերպել ամառային ճամբարներ՝ հատուկ, ռազմականացված ծրագրերով, գ) կտրուկ ավելացնել սփյուռքահայ ուսանողներին Յայաստանի ուսումնական հաստատություններում հատկացվող տեղերը, որը հնարավորություն կտա նրանց հաղորդակից դարձնել ռազմական ուսուցմանը եւ այլն:

4. ՅՄՅՄ-ի հատուկ հայտարարությամբ միջազգային հանրությանը հստակորեն տեղյակ պահել այն մասին, որ Յայաստանի վրա արտաքին հարձակման դեպքում հնարավոր ազդեցորն իր դեմ կունենա ոչ թե միայն Յայաստանը եւ Ղարաբաղը՝ իրենց 3,5 մլն բնակչությամբ, այլեւ ողջ սփյուռքահայությունը՝ աշխարհի համայն 10 մլն. հայությունը՝ իրենց բոլոր տեսակի ռազմական, տնտեսական եւ քաղաքական ներուժով ու կարողություններով:

5. Սփյուռքի մեծահարուստները (առանց անունները նշելու) հանդես գան հատուկ հայտարարությամբ առ այն, որ նրանք պատրաստ են յուրաքանչյուր տարի ավելացնել Յայաստանի պետական բյուջեով հատկացվող ռազմական ծախսերը՝ ոչ միայն դա հասցնելով 1 մլրդ դոլարի, այլեւ անցնելով այդ սահմանը:

Հայրենիք-Սփյուռք համագործակցության նոր մոտեցումների համակարգում, հասկանալի է, հարկ է ներառնել եւ ավելի մեծ տեղ հատկացնել նաեւ գիտական, կրթական եւ մշակութային ոլորտներին՝ առանձին դեպքերում հրաժարվելով հին եւ իրենց դարձնել ավելի համագործակցության ձեւերից, շեշտը դնելով բարձրագույն տեխնոլոգիաների, իննովացիոն ուղղությունների եւ մեթոդների վրա:

Այսպիսին են ընդհանուր գծերով մեր կողմից առաջարկվող նոր մոտեցումները Հայաստան-Սփյուռք հարաբերություններին՝ ելնելով Հայաստանին եւ ողջ հայությանը սպառնացող նոր վտանգներից եւ մարտահրավերներից, ու հայության ազգային անվտանգությունն ապահովելու հրատապ խնդիրներից:

Մենք, իհարկե, պատկերացում ենք այն բոլոր դժվարությունները, որ կանգնած են համասփյուռքյան կառույցներ եւ Հայաստան-Սփյուռք համադրալ մարմին ստեղծելու ճանապարհին: Բայց այդ դժվարությունները չեն կարող պատճառ հանդիսանալ նման գաղափարից հրաժարվելու համար: Հայությունն իր բազմադարյան պատմության ընթացքում կարողացել է լուծել ավելի բարդ խնդիրներ: Դրա համար անհրաժեշտ է ցանկություն, քաղաքական կամքի դրսեւորում, նեղ հատվածական շահերից վեր կանգնելու եւ դրանք համահայկական, համազգային շահերին ենթարկելու ունակություն:

Դա համապատասխանում է Ամենայն հայոց պետության հզորացման եւ համայն հայ սփյուռքի ինքնության ու հարատեւության պահպանման շահերին:

Դա ժամանակի հրամայականն է: